

# ԱՂՆՋԱՁՈՐ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սիմակ Խուրդյան  
Հեռախոս՝ +374 77.458230

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում է Աղնջաձոր գյուղին: Գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 17-18 կմ հյուսիս-արևմուտք, Երևանից ունի 140 կմ հեռավորություն: Գյուղը հիշատակվում է նաև 13-14 -րդ դարերում: Նախկինում գյուղն ունեցել է Ենգիչա, Դրունք, , Աղքյանդ, Լեռնանցք անվանումները, պայմանավորված՝ իր տեղադիրքով: Գտնվում է Սուլեմայի լեռնանցքից հարավ: Գյուղը 1968 թ-ին վերանվանվել է Աղնջաձոր:

Գյուղն ընկած է Վարդենիսի լեռնաշղթայի հարավահայաց լանջերին, ծովի մակարդակից ունի 1665 մ բարձրություն: Կլիման չափավոր տաք է և չոր, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Տարեկան տեղումների քանակը 400-450 մմ: Բնական լանդշաֆտները տափաստաններն են: Անտառային ֆոնդը կազմում է 276 հա: Այն պատմականորեն եղել է Օրբելյանների կալվածքը և այս ժամանակահատվածը դիտվում է որպես Վայոց ձորի ամենածաղկուն շրջանը: Տնտեսական կյանքին, առևտրի զարգացման համար մեծ նշանակություն ունեն ճանապարհաշինությունը, քանի որ երկրի տերերը մեծ շահ ունենին անց ու դարձ անող քարավաններից, բացի մաքսավարձից, նրանք օգտվում էին նաև առևտրից: Այս տարածքով է անցել Դավրեժ-Պարտավ տարանցիկ ճանապարհը: Ճանապարհի ապահովության, ուղևորների համար բարեկարգ օթևաններ, անասունների համար կեր, գոմեր և այլ հարմարություններ ստեղծելու հարցով մտահոգվել են կալվածատեր իշխանները:

1332 թ-ին Լիպարիտ Օրբելյանի որդին՝ Չեսար իշխանը կառուցել է Սուլեմայի (Մելիմի) քարավանատունը, որը գտնվում է համանուն լեռնանցքի ամենաբարձր հատվածի վրա: Այն բաղկացած է սրբատաշ քարերով կառուցված երեք թաղակապ սենյակներից: Ժողովրդի մեջ էլ տարածված է մեկ այլ ավանդույթ, թե իբր Սմբատ Օրբելյանի որդին ձնաբքերի ժամանակ կորել է այդ լեռներում և նա, ի հիշատակ որդու, կառուցել է տվել քարավանատունը այլ ճամփորդների համար, որպեսզի ձնաբքերի ժամանակ նրանք հանգրվանեն այստեղ այնքան ժամանակ, մինչև եղանակը լավանա և շարունակեն ճանապարհը: Գյուղի մոտ է կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին, Սուլեմայի բերդը: Աղնջաձորի քարավանատունը՝ կառուցված 13-14-րդ դարերում: Բնակչությունը ներգաղթել է ռուս-պարսկական պատերազմի տարիներին Խոյ, Սալմաստ գավառներից:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ:

Շուրջ 163 հոգի զբաղվում են սեփական հողերի մշակությամբ: Գյուղի բնակչության զբաղվածության հիմնական ճյուղը անասնապահությունն է:

Գյուղատնտեսական հողահանդակներից 167 հա խոտհարքերն են: Արոտավայրերը կազմում են 894 հա: Մարդիկ զբաղվում են նաև դաշտավարությամբ, պտղաբուծությամբ: Մշակում են հացահատիկ, կերային մշակաբույսեր:

Մինչև Սուլեմայի լեռնանցքի տակով անցնող Մարտունի-Եղեգնաձոր միջպետական նշանակության ճանապարհի վերանորոգումը, գյուղը կտրված դիրք ուներ, իսկ այժմ գյուղի բնակչությունը մեծ ակնկալիքներ ունի գյուղի տարանցիկ դիրքից: Առավել ևս, որ արդեն Իրան-Վրաստան բեռնափոխադրումների մի մասն անցնում է այս ճանապարհով:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Աղնջաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 12 հուշարձան: